


ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ (4-րդ եռամսյակում)

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 33 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:




Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք




Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով: 2058 դիտակետում ընդհանուր լուծված աղերի (0.43 գ/լ) և նիտրատ իոնի (17.9 մգ/լ) կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք




Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 35 դիտակետերում՝ 13 բնադրյալում, 6 շատրվանոց և 16 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 15 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք




Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 22 դիտակետերում՝ 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 8 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:








Սևանի ջրավազանային կառավարման տարածք




Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 11 դիտակետերում՝ 5 բնադրյուրում, 6 շատրվանոց հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:






Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 24 դիտակետերում՝ 11 բնաղբյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:




Շատրվանոցի հորատանցքեր
Ծախս, լ/վ

Արարատյան ՋԿՏ




Չշատրվանոցի հորատանցքեր
Մակարդակ, մ

Արարատյան ՋԿՏ




Գրունտային ջրհորներ
Մակարդակ, մ


Արարատյան ՋԿՏ



Ընդհանուր լուծված աղեր

Արարատյան ՋԿՏ





Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 4 դիտակետում լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:

